

ՀՀ Վայոց ձոր և ՌԴ Արխանգելսկի մարզերն այսօր հաստատեցին համատեղ գործողությունների ծրագիրը

20.09.2018



Արխանգելսկը և Վայոց ձորը շարունակում են ամրապնդել գործարար և մշակութային կապերը: Այսօր կողմերը Արխանգելսկ քաղաքում ստորագրեցին միջոցառումների իրականացման համատեղ ծրագիրը: Փաստաթղթում տեղ են գտել հստակ քայլեր, որոնք ուղղված են մարզերի միջև ավելի վաղ ստորագրված համագործակցության համաձայնագրի իրականացմանը:

Փաստաթուղթը ստորագրվեց ՌԴ Արխանգելսկի մարզպետ Իգոր Օրլովի և ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթեյանի կողմից:

Միջոցառմանը ներկա էին Արխանգելսկ մեկնած Վայոց ձորի պատվիրակության անդամները՝ Ջերմուկ համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը, Արենիի համայնքապետ Հուսիկ Սահակյանը, Եղեգիսի համայնքապետ Արթուր Ստեփանյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական Վասիլ Ասլանյանը և գործարար աշխարհի ներկայացուցիչներ:

Արխանգելսկի մարզպետ Ի. Օրլովը նշեց, որ Վայոց ձորի պատվիրակությունը շատ ճիշտ ժամանակ է ընտրել այցելության համար: Այս օրերին Արխանգելսկում անցկացվում է Մարգարիտյան առևտրա-արդյունաբերական միջազգային տոնավաճառը: Այս առումով հայկական կողմին հնարավորություն է ընձեռնվել ծանոթանալ Արխանգելսկի հսկայական տնտեսական և ստեղծարար ներուժի հետ: Մարզպետ Ի. Օրլովը համոզմունք հայտնեց, որ տոնավաճառի ժամանակ հայկական կողմը կգտնի նոր ընկերներ և բիզնես գործընկերներ: <Շնորհակալություն եմ հայտնում Մարգարիտյան տոնավաճառին մասնակցելու հրավերի համար: Սյստեղ նոր հնարավորություններ են բացվում գործարար կապերի հաստատման, ինչպես նաև արտաքին կապերի ստեղծման և ամրապնդման համար: Ուզում եմ նշել, որ մեր բարեկամ մարզերի միջև հաստատված համագործակցության ոլորտներում տեղի են ունենում որակական փոփոխություններ: Ես համոզված եմ, որ այս փաստաթղթի ստորագրումը կարևոր քայլ է, որի շնորհիվ նորանոր ծրագրերի իրագործման նոր ուղիներ են բացվում>,- իր խոսքում նշեց Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթեյանը:

Ծրագրի համաձայն նախատեսվում է մարզերում հեռանկարային ներդրումային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, Հայաստանում և Արխանգելսկում առևտրային ներկայացուցչությունների բացում, համատեղ բիզնես առաքելությունների, առողջապահական, գիտական և կրթական ծրագրերի իրականացում, զբոսաշրջության ոլորտում գործակցություն, մշակութային և ուսանողական փոխանակման ծրագրերի իրագործում:

<Այսօր համատեղ շատ ծրագրեր կան: Մենք ուզում ենք, որ մեր երկու երկրների

գործարարները ուղիղ կապի մեջ լինեն: Համագործակցության ոլորտները սահմանափակումներ չունեն՝ գյուղատնտեսություն, փայտամշակման և քիմիական արդյունաբերություն և, իհարկե, զբոսաշրջություն, շինարարություն և մի շարք այլ ոլորտներ>,-նշեց Արխանգելսկի մարզպետ Ի. Օրլովը:

աղբյուրը՝ dvinaland.ru

Поморье и Вайоц-Дзор утвердили план совместных мероприятий

19 сентября

Экономика Международные связи Бизнес



Подписи под документом поставили губернатор Архангельской области Игорь Орлов и глава Вайоцдзорской области Республики Армения Арагац Сагателян



 Поморье и Вайоц-Дзор договорились п ...

Архангельская область продолжает укреплять деловые и культурные связи с Вайоцдзорской областью Республики Армения.

Сегодня сторонами утверждён план совместных мероприятий. В документе обозначены конкретные шаги, направленные на реализацию ранее заключенного между регионами соглашения о сотрудничестве.

Подписи под документом поставили губернатор Архангельской области Игорь Орлов и глава Вайоцдзорской области Республики Армения Арагац Сагателян.

В мероприятии приняли участие прибывшие на Маргаритинскую ярмарку представители армянской делегации: депутат Национального собрания Республики Ашот Арсенян, главы муниципальных образований: Усик Саакян (Арени), Артур Степанян (Ехегис), Вардан Оганесян (Джермук), советник губернатора Вайоцдзорской области Васил Асланян, а также представители деловых кругов Армении.

– Вы приехали к нам в самое удачное время – в дни Маргаритинской ярмарки. Благодаря этому вы сможете по достоинству оценить огромный экономический и творческий потенциал нашего края, – приветствовал гостей Игорь Орлов. – Уверен, что благодаря ярмарке вы найдете новых друзей и партнёров по бизнесу, увидите потенциал для реализации новых идей.

В своём ответном слове Арагац Сагателян подчеркнул:

«Хочу поблагодарить за приглашение принять участие в международной Маргаритинской ярмарке. Здесь открываются большие возможности для взаимодействия деловых кругов, создания и расширения внешних связей. Хочу отметить, что в сотрудничестве между нашими регионами сегодня происходят качественные изменения, Я уверен, что подписание плана – важный шаг, открывающий новые пути для совместных проектов».

План, в частности, предусматривает обмен информацией о реализуемых в регионах перспективных инвестиционных проектах, организацию работы Торгового дома Архангельской области в Армении и Торгового дома Армении в Архангельске, проведение взаимных бизнес-миссий, сотрудничество в медицинской, научной и образовательной сферах, взаимодействие в области туризма, студенческий и культурный обмен. В апреле этого года стороны запланировали проведение в Армении совместного бизнес-форума.

– Сегодня совместных проектов очень много. Мы хотим, чтобы предприниматели двух стран вышли на прямые контакты. Сферы сотрудничества ничем не ограничены: это и сельское хозяйство, и деревообрабатывающая и химическая промышленность и, конечно, туризм, деревянное домостроение, целый ряд других направлений, – подводя итоги встречи, заявил Игорь Орлов.

Пресс-служба Губернатора и Правительства Архангельской области

